

- 89 Եւ թէ սրբոի նորուն մեծ տապ
 Ջինքն համոզէր կալ աստ անկապ,
 Ջի ճարակեալ գըտցէ պարապ
 Առ գոլ գահիս ինքնին շահապ:
- 90 Այս բան ի Հայս ճապաղելով,
 Սարգիս ունկամբն իսկ լըսելով,
 Ըզնախանձուն կըշռեալ կորով՝
 Ընտրէր վերջու գահ ինչ ճեպով:
- 91 Յայնմ վայրի անդէտ կային
 Մեծ գահք ոմանք մերոյ Աղգին,
 Այլ նա հաճէր Ռեգեստոնին
 Որ կայ յեզեր Պրոպոնտոսին:
- 92 Յորժամ լըսէր Յակոբ Նալեան
 ԸզՍարգըսի հաճութեան բան,
 Առ բերկրանաց սրբոի իւրեան
 Ուխտէր նրմա զայս ինչ պայման:
- 93 Թէ ես ի քէն չեղէց խնդրակ
 Ջընտրեալ գահիդ տարեկան սակ,
 Որ էր Տաճկաց մարչել համակ
 Երկու հարիւր եւ մին յիսնեակ:
- 94 Այսու դաշամբ Սարգիս չուեալ,
 Յաթոռ իւր նոր ժաման եղեալ,
 Ուր ի հօտէն լինէր պատուեալ,
 Որպէս հովիւ քաջ եւ ընտրեալ:
- 95 Իսկ յետ փոքու Յակոբ ժըխտէր,
 Ջայն հասն անտի ճիշտ պահանջէր,
 Որում Սարգիս սըրանեալ գըրէր
 Լոյտ, նախատ որ փոքր ինչ ծանր էր: